ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Աբովյան **11/07/2022**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 24 անդամներ:

Բացակա էին՝ Նազիկ Հարությունյանը, Գևորգ Պողոսյանը, Գուրգեն Օսիպյանը (ովքեր իրենց բացակայության պատճառների մասին չեն տեղեկացրել):
Գոռ Գալստյանը և Էմիլ Հարությունյանը ներկայացան օրակարգի նախագիծը հայտարարելուց հետո:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Աննա Չոբանյանը, Եղիշե Ավետիսյանը

Նիստը վարում էր Համայնքի ղեկավար՝ Էդուարդ Բաբայանը

Նիստը արձանագրում էր Աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար՝ Արուսյակ Առաքելյանը

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 11-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՅՈԹԵՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՈՒՍՅԱԿ ԱՌԱՔԵԼՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ և 65-րդ հոդվածների, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***
1. Հաստատել Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի հուլիսի 11-ի արտահերթ յոթերորդ նիստի հետևյալ օրակարգը.
1) Աբովյան համայնքի 2022 թվականի բյուջեի առաջին կիսամյակի եկամուտների և ծախսերի կատարողականի մասին.
2) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի ղեկավարի

կողմից 2022 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կազմված հողային հաշվեկշռին համաձայնություն տալու մասին.
3) Հողամասից սահմանափակ օգտվելու իրավունք (սերվիտուտ) տրամադրելու մասին.
4) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդային կարգով օտարելու մասին.
5) Աբովյան համայնքի Առինջ գյուղում գտնվող 07-011-0274-0007 կադաստրային ծածկագրով հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.
6) Աբովյան համայնքի Առինջ գյուղի Մեր Մկրտչյան թաղամասի 1-ին փողոցի թիվ 30 հասցում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.
7) Աբովյան համայնքի Առինջ գյուղի Մեր Մկրտչյան թաղամասի 1-ին փողոցի թիվ 32 հասցում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.
8) Սոնիկ, Հայկ և Արմենակ Սարգսյաններին պատկանող 0.09468 հեկտար հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.
9) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող 0.04 հեկտար հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 87-Ա/

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ՉՈԲԱՆՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի, Աբովյան համայնքի ավագանին
որոշում է՝
1. Ի գիտություն ընդունել Աբովյան համայնքի 2022 թվականի բյուջեի առաջին կիսամյակի եկամուտների և ծախսերի կատարողականի մասին համայնքի ղեկավարի հաղորդումները (կցվում է):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

Քննարկում ծավալվեց համայնքի բյուջեի որոշ կապիտալ ծախսերի իրականացման վերաբերյալ:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-14 Դեմ-8 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 88-Ա/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ԿԱԶՄՎԱԾ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի N 656 որոշմամբ՝ Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***
1. Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի կողմից 2022 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կազմված հողային հաշվեկշռին (կցվում են՝ Ձև N 22 և Ձև N 22ա):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման պահից:

Քննարկվեց ոռոգելի տարածքները ոչ ոռոգելի դարձնելու համար հանձնաժողով ստեղծելու հարցը:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-14 Դեմ-10 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 89-Ա/

Լսեցին
ՀՈՂԱՄԱՍԻՑ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՕԳՏՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ (ՍԵՐՎԻՏՈՒՏ) ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 50-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի, Քաղաքացիական օրենսգրքի 211-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի և հիմք ընդունելով «Ռուբիկ Հարությունյանի անվան Աբովյանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության գրությունը (մուտք՝ 2022 թվականի հունիսի 29-ի N S-768), Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է.***
1. Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2022 թվականի հունիսի 27-ի N 27062022-07-0210 վկայական) Աբովյան քաղաքի Հատիսի փողոցի 6/39 հասցեում գտնվող 07-002-0116-0440 կադաստրային ծածկագրով 0.00443 հեկտար բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման

հողամասը, անհատույց, անորոշ ժամանակով, սահմանափակ օգտվելու իրավունքով (սերվիտուտով) տրամադրել «Ռուբիկ Հարությունյանի անվան Աբովյանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը՝ հողամասով անցնելու և /կամ/ երթևեկելու համար:
2. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է «Ռուբիկ Հարությունյանի անվան Աբովյանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 90-Ա/

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***
1. 2022 թվականի ընթացքում աճուրդային կարգով օտարել համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Առաջարկվեց հողամասերի մեկնարկային գները սահմանել կադաստրային արժեքի կրկնապատիկի չափով: Նախագիծը դրվեց քվեարկության առաջարկված տարբերակով:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-23 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 91-Ա/

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՌԻՆՋ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ 07-011-0274-0007 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 17-րդ կետի, հաշվի առնելով «ԷԿՈ ԱԳՐՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության լիազորած անձ Մանուկ Հակոբյանի դիմումը (մուտք՝ 2022 թվականի մարտի 2-ի N S-240) և հիմք ընդունելով հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2022 թվականի հունիսի 21-ի N 83 դրական եզրակացությունը, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է***.

1. Փոփոխել «ԷԿՈ ԱԳՐՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2014 թվականի մայիսի 14-ի N 14052014-07-0042 վկայական) Աբովյան համայնքի Առինջ գյուղում գտնվող 07-011-0274-0007 կադաստրային ծածկագրով 10 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի (վարելահող) նպատակային նշանակությունը որպես բնակավայրերի նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման հողամաս:
2. «ԷԿՈ ԱԳՐՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը պարտավոր է 10 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի նպատակային նշանակության փոփոխության համար Աբովյանի համայնքապետարանի 9001052011363 հաշվեհամարին մուծել հողամասի տվյալ պահին գործող կադաստրային արժեքների տարբերությունը, որը կազմում է 1 047 480 000 (մեկ միլիարդ քառասունյոթ միլիոն չորս հարյուր ութսուն հազար) դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Քանի որ, հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին բոլոր որոշումների նախագծերի վերաբերյալ մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն, առաջարկվեց առաջարկվեց օրակարգի 5-ից 9-րդ հարցերը դնել քվեարկության միաժամանակ:

Կողմ-23 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 92-Ա/

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՌԻՆՋ ԳՅՈՒՂԻ ՄՀԵՐ ՄԿՐՏՉՅԱՆ ԹԱՂԱՄԱՍԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 30 ՀԱՍՑՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 17-րդ կետի, Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 15-ի N 26-Ն որոշման, հաշվի առնելով «ԷԿՈ ԱԳՐՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության լիազորած անձ Մանուկ Հակոբյանի դիմումը (մուտք՝ 2022 թվականի մարտի 2-ի N S-240) և հիմք ընդունելով հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2022 թվականի հունիսի 21-ի N 83 դրական եզրակացությունը, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է.***

1.Փոփոխել «ԷԿՈ ԱԳՐՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2014 թվականի մայիսի 14-ի N 14052014-07-0051 վկայական, կադաստրային ծածկագիր՝ 07-011-0274-0009) Աբովյան համայնքի Առինջ գյուղի Մհեր Մկրտչյան թաղամասի 1-ին փողոցի թիվ 30 հասցեում գտնվող 0.2 հեկտար մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողամասի նպատակային նշանակությունը որպես բնակավայրերի նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման հողամաս:

2.«ԷԿՈ ԱԳՐՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը պարտավոր է՝

1) Աբովյանի համայնքապետարանի 9001052011363 հաշվեհամարին մուծել հողամասի տվյալ պահին գործող կադաստրային արժեքը, որը կազմում է 21 027 600 (քսանմեկ միլիոն քսանյոթ հազար վեց հարյուր) դրամ:

2) Աբովյանի համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին մուծել 250 000 (երկու հարյուր հիսուն հազար) դրամ՝ որպես հողամասի գործառնական նշանակության փոփոխության վճար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-23 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 93-Ա/

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՌԻՆՋ ԳՅՈՒՂԻ ՄՀԵՐ ՄԿՐՏՉՅԱՆ ԹԱՂԱՄԱՍԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 32 ՀԱՍՑՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 17-րդ կետի, Աբովյան համայնքի ավագանու 2022

թվականի ապրիլի 15-ի N 26-Ն որոշման, հաշվի առնելով «ԷԿՈ ԱԳՐՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության լիազորած անձ Մանուկ Հակոբյանի դիմումը (մուտք՝ 2022 թվականի մարտի 2-ի N S-240) և հիմք ընդունելով հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2022 թվականի հունիսի 21-ի N 83 դրական եզրակացությունը, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է.***

1.Փոփոխել «ԷԿՈ ԱԳՐՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2014 թվականի մայիսի 14-ի N 14052014-07-0008 վկայական, կադաստրային ծածկագիր՝ 07-011-0274-0006, Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի 2022 թվականի փետրվարի 3-ի N ԱՏ-03022022-07-0214 տեղեկանքը) Աբովյան համայնքի Առինջ գյուղի Մեր Մկրտչյան թաղամասի 1-ին փողոցի թիվ 32 հասցեում գտնվող 1.77635 հեկտար մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողամասի նպատակային նշանակությունը որպես բնակավայրերի նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման հողամաս:

2.«ԷԿՈ ԱԳՐՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը պարտավոր է՝

1) Աբովյանի համայնքապետարանի 9001052011363 հաշվեհամարին մուծել հողամասի տվյալ պահին գործող կադաստրային արժեքը, որը կազմում է 186 761 887 (հարյուր ութսունվեց միլիոն յոթ հարյուր վաթսունմեկ հազար ութ հարյուր ութսունյոթ) դրամ:

2) Աբովյանի համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին մուծել 1 826 350 (մեկ միլիոն ութ հարյուր քսանվեց հազար երեք հարյուր հիսուն) դրամ՝ որպես հողամասի գործառնական նշանակության փոփոխության վճար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-23 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 94-Ա/

Լսեցին

ՍՈՆԻԿ, ՀԱՅԿ ԵՎ ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆՆԵՐԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ 0.09468 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14^3-րդ հոդվածի 5-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 60-րդ կետի, հաշվի առնելով Արմենակ Սարգսյանի դիմումը (մուտք՝ 2022 թվականի հունիսի 20-ի N Ք-2859) և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2021 թվականի նոյեմբերի 19-ի N 1/փ-337 դրական եզրակացությունը, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Սոնիկ, Հայկ և Արմենակ Սարգսյաններին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2021 թվականի հուլիսի 29-ի N 29072021-07-0154 վկայական, կադաստրային ծածկագիր՝ 07-023-0034-0027) Աբովյան համայնքի Գեղաշեն գյուղում գտնվող 0.09468 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նշանակության (վարելահող) հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողամաս:
2. Սոնիկ, Հայկ և Արմենակ Սարգսյանները պարտավոր են 0.09468 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի նպատակային նշանակության փոփոխության համար Աբովյանի համայնքապետարանի 9001052011363 հաշվեհամարին մուծել հողամասի տվյալ պահին գործող կադաստրային արժեքների տարբերությունը, որը կազմում է 1 119 118 (մեկ միլիոն հարյուր տասնինը հազար հարյուր տասնութ) դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 95-Ա/

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0.04 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14^3-րդ հոդվածի 5-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 60-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2021 թվականի նոյեմբերի 19-ի N 1/փ-337 դրական եզրակացությունը, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***
1. Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2021 թվականի հուլիսի 29-ի N 29072021-07-0176 վկայական) Գեղաշեն գյուղում գտնվող 07-023-0034-0054 կադաստրային ծածկագրով 0.04 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 96-Ա/

Ավագանու անդամներ

ՎԼԱԴԻՄԻՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՍԵԴԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՌԱՉՄԻԿ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

ԷԴՈՒԱՐԴ ԲԱԲԱՅԱՆ

ԱՏՈՄ ԲԱԴԱԼՅԱՆ

ԳՈՌ ԳԱԼՍՏՅԱՆ

ԱՄԱԼՅԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՄԵԼԻՆԵ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԳԵՂԱՄՅԱՆ

ՆՈՐԱՅՐ ԶԱՐԳԱՐՅԱՆ

ԴԱՎԻԹ ԶԱՐՈՅԱՆ

ԱՆԻ ԹԵՆԵՔԵՋՅԱՆ

ՀԱՍՄԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԷԴՎԻՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՆԱԻՐԻ ՀԱԿՈԲՅԱՆ

ԷՄԻԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՄԱՐԳԱՐԻՏԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՆԱԻՐԱ ՄԵԼԻՔՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԵՂՐՅԱՆ

ՆՈՐԱՅՐ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԱՍՊՈՒՐԱԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՊԱՎԵԼ ՑՈՒԳՈՒՆՅԱՆ

ԱՐՄԵՆ ՔՈՍԱԿՅԱՆ

Համայնքի ղեկավար

ԷԴՈՒԱՐԴ ԲԱԲԱՅԱՆ_____